# ՀՐԱՀԱՆԳ ԽՈՇՈՐ ԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՄԱՍԻՆ

636
Հ-99

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1940

ԱՐ.
636
Հ-99
30 JUL 2010

# ՀՐԱՀԱՆԳ
# ԽՈՇՈՐ ԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1940

14.06.2013
21.348

Հաստատում եմ՝
ՍՍՌՄ Սովխոզժողկոմի տեղակալ
Միխալին

Հաստատում եմ՝
ՍՍՌՄ Հողժողկոմի տեղակալ
Վասին
26 հուլիսի 1939 թ.

# ՀՐԱՀԱՆԳ
# ԽՈՇՈՐ ԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՄԱՍԻՆ

## I. ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Անասունների բոնիտիրովկայի նպատակն է որոշել կենդանիների տոհմային արժեքը և նշանակումը՝ համաձայն նրանց ցեղայնության, մթերատվության, ծագման, կոնստիտուցիայի, էքստերյերի և ժառանգության կոմպլեքսային գնահատման։ Տոհմային անասունների օգտագործման, նախրի որակի լավացման և սովխոզներում, կոլխոզներում ու կոլխոզնիկների մոտ անասունների ոչ-ցեղայնությունն արագորեն լիկվիդացիայի ենթարկելու գործում բոնիտիրովկան հանդիսանում է կարևորագույն միջոցառում։

2. Բոնիտիրովկայի արդյունքի հիման վրա ամբողջ նախիրը բաժանվում է ըստ որակային խմբերի (դասերի), ստուգվում է նախրի տոհմային կորիզի կազմը և նրա մեջ առանձնացվում տնտեսության նախրի լավագույն մասը, կազմվում են զուգավորման պլաններ, նախապատրաստվում են նյութերը՝ անասուններին տոհմային գրքերում գրանցելու համար և կատարվում է տնտեսության տոհմային աշխատանքների գնահատում։ Բոնիտիրովկայի նյութերն օգտագործվում են տնտեսության զոոտեխնիկական և անասնաբուժական պրոֆիլակտիկ միջոցառումների պլաններ կազմելու համար։

1775
41



## II. ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՎԱԾՔՆԵՐԸ

3. Բոնիտիրովկայի ենթակա են՝ տոհմային և ոչ-տոհմային սովխոզների բոլոր խոշոր եղջյուրավոր անասունները (բացառությամբ ամորձատվածների և բանող եզների), կոլխոզային տոհմային և ապրանքային ֆերմաների ցեղական անասունները և կոլխոզնիկների, բանվորների ու ծառայողների այն անասունները, որոնք գտնվում են կաթնային մթերատվության զոոտեխնիկական վերահսկողության (կոնտրոլի) տակ։

Ծանոթություն. Կոլխոզային ապրանքային ֆերմաների և կոլխոզնիկների անհատական օգտագործման տակ գտնված անասունների բոնիտիրովկայով ընդգրկելը որոշվում է շրջհողբաժինների և պետտոհմբուծարանների ամեն տարվա պլաններով, որոնք հաստատվում են ռեսպուբլիկաների Հողժողկոմատների և մարզ. ու երկրամասային հողբաժինների կողմից։

4. Անասունների բոնիտիրովկան կատարվում է ամեն տարի։

5. Խոշոր եղջյուրավոր անասունները բոնիտիրովկայի են ենթարկվում ըստ հետևյալ հատկանիշների կոմպլեկսի.

ա) Ցեղայնությունը (արյան չափը), բ) կիթը, գ) կաթի ճարպի տոկոսը, դ) կենդանի քաշը, ե) կոնստիտուցիան և էքստերյերը, զ) ցեղագրությունը (ցուլերի և մատղաշների համար), է) սերնդի որակը (ցուլերի համար)։

6. Յուրաքանչյուր անասունին նայելու—զննելու, նրա կոնստիտուցիայի և էքստերյերի գնահատման, նրա որակական ցուցանիշների հաշվառման, տոհմային և գործարանային գրանցումների հիման վրա անասունի համար սահմանվում է բոնիտիրովկայի դասակարգում և որոշվում է նրա նշանակումը։

### Ա. Ցեղայնությունը (արյան չափի) որոշելը

7. Ցեղը և արյան չափը սահմանվում է ծագման վերաբերյալ փաստացի տվյալների հիման վրա (տոհմային վկայականներ, տոհմային գրանցումներ, ատեստատներ, զուգավորման վկայականներ) անպայմանորեն ստուգելով ցեղային հատկանիշների վերաբերյալ անասունների տիպիկ լինելը՝ անմիջականորեն անասուններին նայելու միջոցով։

8. Զտացեղ անասունները միևնույն ցեղի մետիսների հետ զուգավորելու, ինչպես նաև զտարյունը և մետիսների ոչ ցեղական և լավացրած անասունների հետ զուգավորելու դեպքում նրանցից ստացված սերնդի արյան չափը սահմանվում է հետևյալ սխեմայով՝

Սխեմա № 1

| Մոր գեներացիան (արյան չափը) | Հոր գեներացիան (արյան չափը) | | | | |
|---|---|---|---|---|---|
| | I գեներացիա ($^1/_2$ արյան) | II գեներացիա ($^3/_4$ արյան) | III գեներացիա ($^7/_8$ արյան) | IV գեներացիա ($^{15}/_{16}$ արյան) | Զտարյուն |
| Ոչ եղական | Լավացրած | Լավացրած | I գեներացիա ($^1/_2$ արյան) | I գեներացիա ($^1/_2$ արյան.) | I գեներացիա ($^1/_2$ արյան.) |
| Լավացրած | Լավացրած | ա) լավացրած բ) I գեներաց. ($^1/_2$ արյան) | I գեներացիա ($^1/_2$ արյան) | I գեներացիա ($^1/_2$ արյան.) | I գեներացիա ($^1/_2$ արյան.) |
| I գեներացիա ($^1/_2$ արյան) | I գեներացիա ($^1/_2$ արյան) | I գեներացիա ($^1/_2$ արյան) | II գեներացիա ($^3/_4$ արյան) | II գեներացիա ($^3/_4$ արյան.) | II գեներացիա ($^3/_4$ արյան.) |
| II գեներացիա ($^3/_4$ արյան) | — | II գեներացիա ($^3/_4$ արյան) | II գեներացիա ($^3/_4$ արյան) | III գեներացիա ($^7/_8$ արյան.) | III գեներացիա (7 [illegible] |
| III գեներացիա ($^7/_8$ արյան) | — | — | III գեներացիա ($^7/_8$ արյան). | III գեներացիա ($^7/_8$ արյան). | IV գեներացիա ($^{15}/_{16}$ արյան.) |
| IV գեներացիա ($^{15}/_{16}$ արյան) | — | — | — | IV գեներացիա ($^{15}/_{16}$ արյան.) | Զտարյուն |

*Ծանոթություն*.—Այն անասունները, որոնք ստացվել են II-րդ գեներացիայի ($^3/_4$ արյան) ցուլի և նույն ցեղի լավացրած մայրերի զուգավորումից, կարող են բոնիտյորի կողմից դասվել որպես I-ին գեներացիայի ($^1/_2$ արյան) անասուն, այն պայմանով, որ դրսևորված լինի լավացնող ցեղի (հոր ցեղի) տիպը և իր մթերատվությամբ համապատասխան լինի լավացնող ցեղի II դասի ստանդարտից ոչ պակաս:

9. V և ավելի բարձր գեներացիայի մեստիսները հավասարեցվում են զտարյուններին:

10. Անասուններին անհայտ մեստիսների խմբին դասել չի թույլատրվում: Բոնիտիրովկայի ժամանակ այդ անասունների ծագման վերաբերյալ տվյալները պետք է ճշտվեն և ցեղայնու-



թյունը պետք է սահմանվի սույն հրահանգի 13-րդ կետի հիման վրա:

Առանձին դեպքերում, երբ կենդանուն որոշ ցեղի դասելու համար նրա ծագումը սահմանելն անհնարին է, իսկ իրենք կենդանիները կենդանի քաշով, էքստերյերով և մթերատվությամբ բավականին տարբերվում են ոչ ցեղական անասուններից, այդպիսիներին պետք է դասել լավացրած անասունների խմբին:

Երբ հայտնի է այն ցեղը, որով անասունը լավացվել է և արտահայտված է ցեղի տիպայնությունը, այն դեպքում «լավացրած» կոչմանն ավելացվում է այդ լավացնող ցեղի անունը:

11. Սովխոզի և կոլխոզի համար սահմանված պլանային ցեղի ցուլի և այլ ցեղին պատկանող մայրերի տրամախաչումից ստացված անասունների արյան չափը (գեներացիան) որոշելու դեպքում, բացառությամբ 12-րդ կետում նշվածներից, մայրերը հավասարեցվում են լավացրածներին և նրանց մեստիս սերնդի արյան չափը որոշվում է 8-րդ կետում նշված № 1 սխեմայով:

12. Այն դեպքերում, երբ կենդանիները ստացված են զտարյուն օստֆրիզ (հոլանդական) ցեղի ցուլերի և զտարյուն խոլմոգորյան, յարոսլավյան, թագիլյան ցեղի մայրերի և տիպիկ խառբյան մայրերի կամ զտացեղ շորտհորնյան ցուլերի և զտարյուն գերմանական—կարմիր ցեղի մայրերի տրամախաչումից, ցույց է տրվում երկու ծնողների ցեղը և կենդանիները հավասարեցվում են զտարյուններին ըստ մոր ցեղի (օրինակ՝ «խոլմոգորյան-օստֆրիզյան», «գերմանական-կարմիր-շորտհորնյան» և այլն):

Եթե կենդանիներն ստացված են մեստիսների տրամախաչումից կամ մեկ զտարյուն ծնողից և մյուսը՝ խոլմոգորյան ու օստֆրիզյան ցեղի մեստիսից, այդ դեպքում դարձյալ ցույց է տրվում երկու ծնողների ցեղը և գեներացիան, ըստ որում առաջինը նշվում է ծնողներից նրա ցեղը, որի արյան չափը հանդիսանում է ավելի բարձր. ընդհանուր ցեղայնությունը (արյան չափը) որոշվում է 8-րդ կետի № 1 սխեմայով:

13. Ծագման վերաբերյալ փաստացի տվյալների բացակայության դեպքում թույլատրվում է մեստիս կենդանիների գեներացիան որոշել էքստերյերի, տիպիկ լինելու արտաքին զննումների, մթերատվության ցուցանիշների և տվյալ անասունների ծագումն իմացող անհատների հարցաքննման հիման վրա: Այս դեպքերում թույլատրվում է անասունին տալ I և II գեներա-

ցիա, բոնիտիրովկայի փաստաթղթում նշում կատարելով, որ գեներացիան սահմանվել է առանց ծագման վերաբերյալ տվյալներ ունենալու, ըստ որում յուրաքանչյուր այդպիսի դեպքում կազմվում է ակտ։

Բացառություն թույլատրվում է միմիայն այն տնտեսությունների անասունների նկատմամբ, որտեղ երկար ժամանակ բուծվել են զտարյուն անասուններ, բայց նրանց ծագման վերաբերյալ տվյալները գրավոր ձևակերպված չեն։ Այս դեպքում ստեղծվում է հատուկ զոոտեխնիկական հանձնաժողով, անպայման տոհմային գործի գլխավոր տեսչության ներկայացուցչի մասնակցությամբ, իսկ սովխոզներում՝ Սովխոզժողկոմատի ներկայացուցչի մասնակցությամբ։ Այդ հանձնաժողովը հարցումների կամ տվյալ տնտեսությունը բերված անասունների վերաբերյալ փաստաթղթերի միջոցով պարզում է նախրի ծագումը, մայրական կազմը, ծածկած և ծածկող ցուլերի կազմը, և բնականում նայում են կենդանիներին։ Այդ տվյալների հիման վրա կազմվում է ակտ՝ կենդանիներին զտարյունների շարքը դասելու վերաբերյալ։

14. Այն կենդանիների ցեղայնությունը (արյան չափը), որոնք առաջուց առանց փաստացի տվյալների համարվել են որպես զտարյուն կամ տարբեր գեներացիաների մեստիսներ, որպես օրենք փոփոխման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները եղել են բացառապես ոչ ճիշտ։ Առաջուց որոշված ցեղայնությունը, փաստաթղթերի բացակայության դեպքում (ակտեր, տոհմային վկայականներ) ձևակերպվում է համապատասխան ակտով։

15. Արտասահմանից ներմուծված կենդանիներին բոնիտիրովկայի ենթարկելու ժամանակ անպայմանորեն ցույց է տրվում ներմուծման տարին և այն երկրի անունը, որտեղից արտահանվել է կենդանին, ինչպես և օտարերկրյա նիշի № (ականջի կամ եղջյուրի վրա)։

1929—32 թվականներին ներմուծված հոլանդական (օստֆրիզյան), սիմենտալ, շվից, հերեֆորդ և շորտհորն ցեղի անասունների փաստաթղթերը կորցնելու և այդպիսին վերականգնելու անհնարինության դեպքում համարվում են որպես զտարյուն կենդանիներ, բոնիտիրովկայի փաստաթղթում նշելով տոհմային վկայականի բացակայության մասին։



16. Զտարյուն և մեստիս անասունները ենթարկվում են բոնիտիրովկայի այն ցեղի ստանդարտներով, որոնց նրանք պատկանում են, անկախ հիմնական նախրի ցեղից և տնտեսության համար ընդունված պլանային ցեղից։

Լավացրած և ոչ-ցեղական անասունները բոնիտիրովկայի են ենթարկվում տվյալ տնտեսության համար ընդունված պլանային ցեղի ստանդարտներով։

Արևելյան շրջանների տնտեսություններում, որտեղ մեստիս անասունները բոնիտիրովկայի են ենթարկվում հատուկ ստանդարտներով, լավացրած և ոչ-ցեղական անասունները բոնիտիրովկայի են ենթարկվում այդ նույն ստանդարտներով։

## Բ. Մթերատվությունը որոշելը

17. Բոլոր հասակի կովերի կիթը որոշվում է լակտացիայի առաջին 300 օրում, իսկ այդ ժամկետից շուտ վերջացած լակտացիայի դեպքում նրա փաստացի տևողության կիթով, նշելով լակտացիայի օրերի քանակը։ Սովխոզներում և կոլխոզների տոհմային և ապրանքային ֆերմաներում կիթը որոշվում է մթերատվության ամենօրյա հաշվառման հիման վրա և բացառիկ դեպքերում, կիթի ամենօրյա գրանցումների բացակայության դեպքում, կիթի դեկադային սիստեմատիկ ստուգումների հիման վրա։ Կոլխոզների, բանվորների և ծառայողների անհատական օգտագործման տակ գտնված անասունների կիթը որոշվում է կիթի ամենամսյա կոնտրոլ ստուգումների տվյալների հիման վրա։

18. Առաջին ծին կովերի անավարտ լակտացիայի դեպքում նրանց պայմանական լակտացիոն կիթը 300 օրում որոշվում է հետևյալ կերպ՝ լակտացիայի 1-ին ամսվա կաթը բազմապատկվում է 7,5 գործակցով (կոեֆիցիենտով). 1-ին և 2-րդ ամսվա կիթերի գումարը — 3,7-ով. 1, 2 և 3-րդ ամսվա կիթերի գումարը — 2,5-ով. 1, 2, 3 և 4-րդ ամսվա կիթերի գումարը — 2,0-ով. 1, 2, 3, 4 և 5-րդ ամսվա կիթերի գումարը — 1,6-ով. 1, 2, 3, 4, 5 և 6-րդ ամսվա կիթերի գումարը — 1,4-ով. 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ ամսվա կիթերի գումարը — 1,2-ով։ Ըստ որում, բոնիտիրովկայի տեղեկագրում գրվում է կթված փաստացի կաթի քանակը և չվերջացրած լակտացիայի օրերի թիվը, իսկ կովի դասը որոշվում է հաշված կիթով։

Մեծահասակ կովերի համար կիթի թեորետիկ որոշումը մի որևէցե գործակիցով, օրվա մաքսիմալ կիթով կամ լակտացիայի առաջին ամիսների կիթով չի թույլատրվում։

19. Լակտացիայի 300 օրվա համար կաթի ճարպի միջին տոկոսը որոշվում է կաթի սիստեմատիկ անալիզի հիման վրա, որը կատարվում է ոչ պակաս 2 ամիսը մեկ անգամ, իսկ սովխոզների և կոլխոզների տոհմային ֆերմաների համար՝ սիստեմատիկաբար ամսական մեկ անգամ կատարվող անալիզների հիման վրա։ Անալիզի համար կաթի նմուշները վերցվում են 1 կամ 2 լրիվ օրերի բոլոր կիթերից։

Բոլոր դեպքերում լակտացիայի համար ճարպի միջին տոկոսի հաշվարկը կատարվում է $1^0/_0$-ի կաթի վերածելու միջոցով։

20. Կաթնամթերատվությունը որոշելու համար վերցվում է բոլոր լակտացիաներից ամենաբարձր կիթը (լակտացիայի 300 օրվա համար) և կաթի ճարպի տոկոսն այդ նույն լակտացիայի համար։

Եթե կովի ընթացիկ անավարտ լակտացիայի փաստացի կիթը բավարարում է ավելի բարձր դասի պահանջներին, քան նախորդ լակտացիաների կիթը, մթերատվության դասը սահմանվում է ընթացիկ անավարտ լակտացիայով։

21. Անասունի կենդանի քաշը որոշվում է կշեռքի վրա կշռելու միջոցով։ Չափումների միջոցով կենդանի քաշը որոշել թույլատրվում է միմիայն անհատական օգտագործման տակ գտնված անասունների համար և ծայրահեղ դեպքում՝ կոլխոզ ֆերմաների մեծահասակ անասունների համար։

## Գ. Գնահատումը ըստ էքստերյերի և կոնստիտուցիայի

22. Գնահատումն ըստ էքստերյերի և կոնստիտուցիայի կատարվում է կենդանուն անմիջականորեն բնականում զննելով։

23. Էքստերյերի մանրամասն նկարագրությունը և նրա գնահատումը հասակավոր անասունների համար 100 բալային շկալայով (տես սույն հրահանգին կցված № 1 և № 2 շկալաները) կատարվում է՝

ա) ըստ բոլոր ցեղերի բոլոր զտարյուն և մետիս ցուլերի (սկսած I գեներացիայից) անկախ նրանց դասից.

բ) զտարյուն և IV գեներացիայի մետիս կովերի, անկախ նրանց դասից, սկսած II գեներացիայից՝ օստֆրիզյան (հոլանդական), սիմմենթալ, շվից, հերեֆորդ, շորթհորն և աբերդինանգուսյան ցեղի կովերի համար.



գ) բոլոր մնացած կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի բոլոր մետիս կովերի, որոնց կաթնամթերատվությունը համապատասխանում է I դասի ստանդարտի պահանջներին և մսատու սովխոզներում մսատու ցեղի մետիս կովերի, որոնց կենդանի քաշը համապատասխանում է I դասի ստանդարտներին։

24. Բոնիտիրովկայի ենթակա մնացած բոլոր մեծահասակ կենդանիների ցեղային խմբերը, ինչպես և մատղաշներն ըստ էքստերյերի գնահատվում են խմբովին 5 բալային սիստեմով՝ գերազանց (5), լավ (4), բավարար (3), անբավարար (2) և վատ (1), ցույց տալով առանձնապես աչքի ընկնող և արտաքին հոդվածները։

25. Վերոհիշյալ խմբերի կենդանիների 100 բալային շկալայի էքստերյերային պարտադիր գնահատումը կատարվում է երկու անգամ։ Ցուլերի առաջին գնահատումը կատարվում է նրանց զուգավորման հասակի հասնելուց հետո, կովերինը՝ առաջին լակտացիայով կամ լակտացիայի երկրորդ տարում, եթե նա առաջին լակտացիայով բոնիտիրովկայի չի ենթարկվել։ Երկրորդ գնահատումը կատարվում է ցուլերինը՝ 4 տարեկան հասակում և կովերինը՝ 3-րդ ծնից հետո, որից հետո ամեն տարի կենդանիների 100 բալային շկալայով գնահատելը պարտադիր չէ։

26. Կաթնատու ցեղի կենդանիներին առանց 100 բալային շկալան կիրառելու ըստ էքստերյերի և կոնստիտուցիայի գնահատելու դեպքում «գերազանց» կամ «լավ» գնահատական տրվում է կենդանու կրծքի լավ կամ գերազանց բարեկազմության դեպքում (լայն, խորը, առանց թիակների ետևի սղմվածության) ուղղագիծ մեջքի, գոտկատեղի, կոնքի, բավարար զավակի, ոտքերի ուղիղ դրվածքի, կուրծք արտահայտված թրաձևության և կարգինաձև կրծքության բացակայության դեպքում, ամուր ոսկրակազմով, առանց գերազարգացման և կոպտության։

Մսատու ցեղերի կենդանիներին գնահատելու դեպքում «գերազանց» թվանշան տրվում է քիփ՝ կոմպակտ կազմվածքի, ամուր և ոչ գերազարգացած ոսկրակազմի, լավ արտահայտված մսատու տիպի, իրեն հասակի և սեռի համար ֆիզիկապես նորմալ զարգացման, կարճ և հաստ վզի, առանց թիակների հետևից սղմված, լայն և խորը կրծքի, լավ զարգացած ներքնակրծքի, լայն և խորը մարմնի, կլոր կողերի, լավ ծածկված մկանունքների, լայն և ուղիղ մեջքի, գոտկատեղի, զավակի, երկար,

լայն և ուղիղ ետնամասի, լավ զարգացած ազդրերի, ուղիղ և լայնադիր առաջին և ետին կարճ ոտքերի, վերջինիս թրաձևության և կարգինաձև կորության բացակայության դեպքում։

Բոնիտիրովկայի ենթարկվող կենդանու էքստերյերի շեղման աստիճանին նայած՝ տրվում է նրան գնահատական՝ լավ, բավարար, անբավարար և վատ։

27. Կենդանուն բոնիտիրովկայի ենթարկելու ժամանակ որոշվում է նաև նրա գիրությունը՝ ճարպոտ, միջակից բարձր, միջակ և միջակից ցածր։

### Դ. Կենդանու առողջական վիճակը

28. Խոշոր եղջյուրավոր անասունների անասնաբուժական մշակումը կատարվում է մինչև բոնիտիրովկան սկսելը։

29. Բոնիտիրովկայի ժամանակ լրացվող փաստաթղթերում նշվում է կենդանու առողջական վիճակը, տրավմատիկ վնասվածքները, կրծի արատները։ Առողջական վիճակի մասին տվյալներն անպայման հաշվի են առնվում կենդանու նշանակումը որոշելիս, զուգավորման պլան կազմելիս, զոոտեխնիկական, անասնաբուժա-պրոֆիլակտիկ կամ առողջացման միջոցառումների պլան կազմելիս։

## III ԴԱՍԵՐԻ ՈՐՈՇԵԼԸ

30. Բոնիտիրովկայի ժամանակ զտարյուն և IV գեներացիայի մետիս կենդանիները բաշխվում են հետևյալ հինգ դասերի՝

Էլիտա—ռեկորդ,
Էլիտա,
I դաս,
II դաս,
III դաս։

Մետիս, լավացրած և ոչ-ցեղական կենդանիների բոնիտիրովկայի ժամանակ սահմանվում են հետևյալ հինգ դասերը՝

Ռեկորդ,
Ընտիր,
I դաս,
II դաս,
III դաս։



### Ա. Կովերի դասերը

31. Կովերի դասերը որոշվում են ըստ հետևյալ հատկանիշների կոմպլեքսի՝ կիթը, կաթի մեջ ճարպի պարունակությունը, կենդանի քաշը, կոնստիտուցիան և էքստերյերը։

Կովերի դասը որոշելու հիմնական գնահատական ընդունվում է նրա մթերատվության գնահատումը (կիթը և ճարպի տոկոսը)։ Ըստ մթերատվության կովի դասը կոմպլեքսային հատկանիշներով որոշելիս կարելի է բարձրացնել կամ ցածրացնել միմիայն մեկ դասով այն դեպքում, երբ՝ ա) կովի դասը և՛ ըստ էքստերյերի և՛ ըստ կենդանի քաշի բարձր է կամ ցածր է մեկ-երկու դասով. բ) դասը ըստ էքստերյերի կամ կենդանի քաշի բարձր կամ ցածր է երկու և ավելի դասով։ Ըստ մթերատվության էլիտա-ռեկորդ և ռեկորդ դասի կովերի նկատմամբ կոմպլեքսային դասի իջեցումը մինչև էլիտա և ընտրովիների դասը թույլատրվում է միմիայն այն դեպքերում, երբ կովի էքստերյերը և կենդանի քաշը գնահատվել է I դասով և ցածր։

Ըստ մթերատվության էլիտա և ընտրովի կովերի դասի բարձրացումը էքստերյերի և կենդանի քաշի ցուցանիշներով մինչև կոմպլեքսային էլիտա-ռեկորդ և ռեկորդ դասերը — չի թույլատրվում։

32. Կաթնատու և կաթնա-մսատու ցեղի և ոչ ցեղական կովերի դասերը սահմանվում են № 1 տախտակում-ցույց տրված պահանջների հիման վրա։

33. Կովերի էքստերյերի աչքի ընկնող արատային հոդվածների առկայության դեպքում էքստերյերային գնահատման շկալայում թված քանակից չի թույլատրվում կովերին էլիտա և ընտրովիների և էլիտա-ռեկորդ և ռեկորդ դասերին վերագրել։

34. Եթե կաթի ճարպի տոկոսը կամ կիթը լակտացիայի 300 օրում կամ կարճացրած լակտացիայում չի բավարարում տվյալ ցեղի համար սահմանված պահանջներին, բայց լակտացիայի 300 օրվա կիթը մեկ տոկոսանի կաթով արտահայտված՝ 10%-ով գերազանցում է համապատասխան դասի համար սահմանված ստանդարտի պահանջներից, կենդանիները դասվում են տվյալ դասին։

35. Կաթի ճարպի տոկոսի վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում կովի դասը որոշվում է բոլոր մնացած ցուցանիշներով, բայց կաթի վերաբերյալ պահանջը բարձրացվում է 10%-ով։

Տախտակ № 1

Կարճատու և կարճա-մսատու ցեղի և ոչ-ցեղական կովերի դասերը ոռոնելը

ա) օվիցների համար

| Դասերը | Կիթը լակտացիայի 300 օրում | | | | Կենդանի քաշը | | | | | | Զտարյուն և բոլոր գեներացիայի մեստիս անասունների էքստերյերի և կոնստիտուցիայի գնահատման պահանջները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Զտարյունների և IV գեներացիայի մեստիսների համար | | | III, II և I գեներացիայի մեստիսների, լավացրածների և ոչ ցեղայինների համար | | | | |
| | I լակտացիայում | II լակտացիայում | III լակտացիայում | % Կաթի յուղը | I ծնից հետո | II ծնից հետո | III ծնից հետո | I ծնից հետո | II ծնից հետո | III ծնից հետո | ըստ 100 բալային շկալայի | ըստ 5 բալային սիստեմի |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | 4800 | 5600 | 6200 | 3,7 | 440 | 495 | 540 | 420 | 470 | 515 | 85 բալ | 5 բալ |
| Էլիտա և ընտրովիներ . | 3600 | 4200 | 4650 | 3,7 | 420 | 470 | 515 | 420 | 470 | 515 | 80 » | 5 » |
| I դաս . . . . . . . . | 2400 | 2800 | 3100 | 3,7 | 400 | 450 | 490 | 400 | 450 | 490 | 70 » | 4 » |
| II դաս . . . . . . . | 1800 | 2100 | 2350 | 3,7 | 360 | 410 | 440 | 360 | 410 | 440 | 60 » | 3 » |
| III դաս . . . . . . . | II դասի պահանջից ցածր | | | | | | | | | | | |



բ) Սիմմենտալների համար

| Դասերը | Կիթը լակտացիայի 300 օրում | | | | Կենդանի քաշը | | | | | | Զտարյուն և բոլոր գեներացիայի մեստիս անասունների էքստերյերի և կոնստիտուցիայի գնահատման պահանջները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Զտարյուն և IV-րդ գեներացիայի մեստիսների համար | | | III, II և I գեներացիայի մեստիսների, լավացրածների, ևոչ ցեղայինների համար | | | | |
| | I լակտացիայում | II լակտացիայում | III լակտացիայում | % Կաթի յուղը | I-ին ծնից հետո | II-րդ ծնից հետո | III-րդ ծնից հետո | I-ին ծնից հետո | II-րդ ծնից հետո | III-րդ ծնից հետո | Ըստ 100 բալային շկալայի | Ըստ 5 բալային սիստեմի |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ . . . | 4600 | 5400 | 6000 | 3,7 | 460 | 520 | 560 | 440 | 495 | 535 | 85 բալ | 5 բալ |
| Էլիտա և ընտրովիներ . . . . | 3450 | 4050 | 4500 | 3,7 | 440 | 495 | 535 | 440 | 495 | 535 | 80 » | 5 » |
| I դաս . . . . . . . . . . | 2300 | 2700 | 3000 | 3,7 | 420 | 470 | 510 | 420 | 470 | 510 | 70 » | 4 » |
| II դաս . . . . . . . . . | 1700 | 2000 | 2250 | 3,7 | 380 | 430 | 460 | 380 | 430 | 460 | 60 » | 3 » |
| III դաս . . . . . . . . . | II դասի պահանջից ցածր | | | | | | | | | | | |

*Ծանոթություն.* — Համաձայն սույն հրահանգի 16-րդ կետի լավացրած և ոչ-ցեղական անասունները բոնիտերովկայի են ենթարկվում տվյալ տնտեսության համար ընդունված պլանային ցեղի ստանդարտներով։

## Բ. Ցուլերի դասերը

36. Ցուլերի դասերը որոշվում են հետևյալ հատկանիշների կոմպլեքսով.

ա) ըստ ցեղագրության (ծագման).

բ) ըստ կենդանի քաշի.

գ) ըստ էքստերյերի և կոնստիտուցիայի.

դ) ըստ սերունդի:

37. Ցուլերի դասը ըստ ցեղագրության (ծագման) որոշվում է մոր դասով, և հոր դասով՝ ըստ № 2 սխեմայի:

*Սխեմա № 2*

Ցուլերի դասը որոշելը ծնողների դասով

| Մոր դասը | Հոր դասը | | | |
|---|---|---|---|---|
| | էլիտա-ռեկորդ և ռեկորդ | էլիտա և ընտրովիներ | I դաս | II դաս |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | էլիտա-ռեկորդ և ռեկորդ | էլիտա-ռեկորդ և ռեկորդ | — | — |
| Էլիտա և ընտրովիներ . . | էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա և ընտրովիներ | — | — |
| I դաս . . . . . . . . . | էլիտա և ընտրովիներ | I դաս | I դաս | — |
| II դաս . . . . . . . . . | I դաս | I » | II » | II դաս |
| III դաս . . . . . . . . . | II » | II » | III » | III » |

*Ծանոթություն.*— ա) Մոր դասը և հոր դասը որոշվում են բոլոր հատկանիշների կոմպլեքսով: Կոմպլեքսով գնահատելն անհնարին լինելու դեպքում կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի մոր դասը սահմանվում է նրա կաթով, կաթի ճարպի տոկոսով և կենդանի քաշով, իսկ հոր դասը՝ մոր դասով, կաթով, կաթի ճարպի տոկոսով և կենդանի քաշով, իջեցնելով մեկ դասով ի դիմաց մոր դասի:

Հոր դասը որոշող տվյալների բացակայության դեպքում բոնիտիրովկայի ենթարկվող ցուլի դասը ըստ ծագման սահմանվում է միայն ըստ մոր դասի, բայց մեկ դասով ցածր: Բոնիտիրովկայի ենթարկվող ցուլի հոր աղջիկների մթերատվության վերաբերյալ տվյալներ լինելու դեպքում, նրա դասը որոշվում է հաշվի առնելով աղջիկների տվյալները № 4 տախտակով:

բ) Ցուլի ծագման վերաբերյալ փաստաթղթերի բացակայության դեպքում ցուլի դասը սահմանվում է նրա կենդանի քաշով, կոնստիտուցիայով և էքստերյերով, իջեցնելով մեկ դասով. բայց այդ դեպքում դասը սահմանվում է ոչ բարձր I դասով, և բոնիտիրովկայի քարտում նշում է կատարվում՝ «առանց ծագումի»:

38. Կաթնատու և կաթնա-մսատու ցեղի ցուլերի դասը ըստ կենդանի քաշի, կոնստիտուցիայի և էքստերյերի որոշելը կատարվում է, ելնելով հետևյալ պահանջներից՝

*Տախտակ № 2*

Կաթնատու և կաթնա-մսատու ցեղի ցուլ—արտադրողների դասերի համար նվազագույն պահանջները ըստ նրանց անհատական որակի

| Հատկանիշները | Դասերը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա և ընտրովիներ | I դաս | II դաս | III դաս |
| Կենդանի քաշը տոկոսներով ՊՏՖ ստանդարտից . . . . . | 110 | 105 | 100 | 90 | II դասի պահանջից ցածր |
| Կոնստիտուցիան և էքստերյերն ըստ 100 բալային շկալայի . | 85 | 80 | 75 | 65 | 65 բալից ցածր |

Նույնը բացարձակ թվերով ըստ ցեղերի՝

Շվեցների համար

| Դասերը | Կենդանի քաշը հասակում (կգր.) | | | | | Կոնստիտուցիան և էքստերյերը ըստ 100 բալային շկալայի |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 տ. 6 ամս. | 2 տար. | 3 տար. | 4 տար. | 5 տար. և ավելի | |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | 410 | 505 | 650 | 780 | 880 | 85 |
| Էլիտա և ընտրովիներ . . | 390 | 480 | 620 | 745 | 840 | 80 |
| I դաս . . . . . . . . | 370 | 460 | 590 | 710 | 800 | 75 |
| II դաս . . . . . . . . | 330 | 410 | 530 | 640 | 720 | 65 |
| III դաս . . . . . . . . | II դասի պահանջից ցածր | | | | | 65 բալից ցածր. |

Սիմմենտալների համար

| Դասերը | Կենդանի քաշը հասակում (կգր.) | | | | | Կոնստիտուցիան և էքստերյերը ըստ 100 բալային շկալայի |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 տար. 6 ամս. | 2 տար. | 3 տար. | 4 տար. | 5 տար. և բարձր | |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | 440 | 450 | 680 | 800 | 900 | 85 |
| Էլիտա և ընտրովիներ . . | 420 | 515 | 650 | 765 | 860 | 80 |
| I դաս . . . . . . . . | 400 | 490 | 620 | 730 | 820 | 75 |
| II դաս . . . . . . . . | 360 | 440 | 560 | 660 | 740 | 65 |
| III դաս . . . . . . . . | II դասի պահանջից ցածր | | | | | 65 բալից ցածր |

39. Ցեղագրությամբ սահմանված ցուլի դասը մնում է անփոփոխ, եթե ցուլի կենդանի քաշի և էքստերյերի ցուցանիշները համապատասխանում են այդ նույն դասի պահանջներին:

Այն դեպքում, երբ պահանջներն ըստ կենդանի քաշի և էքստերյերի բարձր են կամ ցածր մեկ դասով, կամ եթե այդ հատկանիշներից մեկի ցուցանիշը ցածր կամ բարձր է երկու դասով, համեմատած ըստ ցեղագրության սահմանված դասի հետ, այդ դեպքում ցուլի դասը համապատասխանորեն բարձրացվում է կամ ցածրացվում մեկ դասով:

40. Սովխոզներում և տոհմաբուծարաններում բոնիտիրովկայի ենթարկվող ցուլի սերնդի նկատմամբ մթերատվության տվյալների առկայության դեպքում ցուլի դասը ըստ սերնդի որոշվում է կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի համար:

41. Ծագումով, կոնստիտուցիայով, էքստերյերով և կենդանի քաշով որոշված բոնիտիրովկայի ենթարկվող ցուլի դասը բարձրացվում կամ ցածրացվում է մեկ դաս, կախված նրա սերնդի գնահատումից, ըստ որում, եթե դուստրերի թիվը 20-ից շատ է, դասի ցածրացումը կամ բարձրացումը թույլատրվում է մեկ դասի տարբերության դեպքում, 4-ից մինչև 20 դուստրերի քանակի դեպքում բարձրացումը կամ ցածրացումը թույլատրվում է 2 դասի տարբերության դեպքում և քանակով մինչև 4 դուստրերի դեպքում թույլատրվում է միմիայն դասի բարձրացում այն պայմանով, եթե բոլոր դուստրերն իրենց ցեղագրությամբ դասը գերազանցում են ոչ պակաս քան երկու դասով:





Կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի արտադրող ցուլերի դասերն ըստ նրանց սերնդի որոշելու նվազագույն պահանջներ

| Դուստրերի քանակի դեպքում | Ցուլերի դասերը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | | Էլիտա և ընտրովիներ | | I դաս | | II դաս | III դաս |
| | Բոլոր դուստրերի միջին կիթը ՊՏԳ ստանդարտի համեմատությամբ տոկոսներով | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ դասերին համապատասխանող դուստրերի քանակը | Բոլոր դուստրերի միջին կիթը ՊՏԳ ստանդարտի համեմատությամբ տոկոսներով. | Էլիտա և ընտրովիների դասին համապատասխանող դուստրերի քանակը | Բոլոր դուստրերի միջին կիթը ՊՏԳ ստանդարտի համեմատությամբ տոկոսներով | I դասի դուստրերի քանակը | | |
| 1— 3 | — | 100 % | — | 100 % | — | 100 % | II դասի պահանջից ոչ ցածր բոլոր դուստրերի միջին մթերատվությունը | II դասի պահանջից ցածր բոլոր դուստրերի միջին մթերատվությունը |
| 4— 5 | 150 | 2 | 125 | 2 | 100 | 2— 3 | | |
| 6—10 | 130 | 2—3 | 115 | 2—3 | 95 | 3— 6 | | |
| 11—20 | 120 | 3—4 | 110 | 3—4 | 93 | 7—12 | | |
| 20-ից բարձր | 115 | Դուստրերի ընդհանուր քանակի 20 % | 105 | Դուստրերի ընդհանուր քանակի 20 % | 90 | Դուստրերի ընդհանուր քանակի 60 % | | |

1775
41

Ըստ որում մեծահասակ դուստրերի կոնստիտուցիայի և էքստերյերի միջին բալային գնահատականը 100 բալային շկալայով պետք է լինի ոչ պակաս՝

| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա և ընտրովիներ | I դաս |
|---|---|---|
| 75 բալ | 70 բալ | 65 բալ |

42. Ցուլի գնահատման դեպքում վերցվում է մոր և դուստրերի լակտացիաներից ամենաբարձր կիթը, իսկ ճարպի %-ը (տվյալների առկայության դեպքում) վերցվում է ամենաբարձր լակտացիայի միջինը:

43. Ցուլի դասը սերունդով որոշելու դեպքում դուստրերի կիթը հաշվի է առնվում միմիայն այն սովխոզների, կոլխոզային ֆերմաների բրիգադաներում, որոնք ունեն կովերի միջին կիթ ոչ պակաս II դասի պահանջից:

ՀՍՍՀ-ССР А. Мясникова

Բոլոր դուստրերի միջին կիթը հաշվելու համար առաջին և երկրորդ ծնի կիթերը վեր են ածվում երրորդ ծնի և բարձր, որպիսիք սահմանված են պետտոհմ գրքի համար կամ համաձայն վերջին բոնիտիրովկայի տվյալների կիթի փաստացի հարաբերակցության: Այն դեպքում, երբ ցուլի դուստրերի ճնշող մեծամասնությունը տալիս են միմիայն առաջին լակտացիայի կաթը, մնացած դուստրերի կաթը դարձյալ վերցվում է առաջին լակտացիայի համար: Եթե դուստրերի ճնշող մեծամասնության ամենաբարձր մթերատվությունը հայտնաբերված է 2-րդ լակտացիայով, մնացած հասակավոր դուստրերի համար կաթը վերցվում է 2-րդ լակտացիայով, իսկ առաջին ծին դուստրերի կաթը հաշվի չի առնվում: Վերջին երկու դեպքերում միջին կիթը հաշվելու համար 3-րդ լակտացիայի վերածելը չի կատարվում:

### Գ. Մատղաշների դասերը

44. Մատղաշները ենթարկվում են բոնիտիրովկայի 10 օրական հասակից, ըստ հետևյալ հատկանիշների կոմպլեքսի՝ ցեղայնության (արյան չափ), ծագման, կենդանի քաշի, կոնստիտուցիայի, էքստերյերի և տվյալ ցեղին յուրահատուկ արտահայտված տիպի:

Ծանոթություն.—Կոնստիտուցիայի և էքստերյերի գնահատումը կատարվում է 6 ամսական հասակից:

45. Ոչ-ցեղական մատղաշին (ցուլիկներ և էգ հորթեր), ինչպես և կարմիր-նեմկա, բեստուժևյան, խոլմոգորյան ցեղի I և II գեներացիայի ցուլիկներին դաս չի սահմանվում, այլ միմիայն որոշվում է նրանց նշանակումը:

46. Մատղաշի ցեղայնությունը որոշելը կատարվում է նույն ձևով, ինչպես և մեծահասակ անասունների համար (տես № 1 սխեման):

47. Մատղաշի դասը սահմանվում է՝

ա) ըստ ծագման,

բ) ըստ կենդանի քաշի և

գ) ըստ կոնստիտուցիայի ու էքստերյերի:

48. Մատղաշի դասն ըստ նրա ծագման սահմանվում է նույն ձևով, ինչ ձևով մեծահասակ ցուլերի դասը ըստ ծագման (տես ծանոթություններով № 2 սխեման):



49. Դասն ըստ կենդանի քաշի սահմանվում է սույն հրահանգին կցված հավելվածի մեջ նշված ստանդարտներին համապատասխան:

50. Դասը որոշելն ըստ ծագման և կենդանի քաշի կատարվում է համաձայն № 3 սխեմայի:

Սխեմա № 3

Ցուլիկների և էգ մատղաշների դասը որոշելն ըստ ծագման և կենդանի քաշի

| Դասը ըստ ծագման | Դասերը ըստ կենդանի քաշի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա և ընտրովիներ | I դաս | II դաս | III դաս |
| Էլիտա-ռեկորդ և ռեկորդ . . . . . . . | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա-ռեկորդ և ռեկորդ | Էլիտա և ընտրովիներ | I | II |
| Էլիտա և ընտրովիներ | Էլիտա և ընտրովիներ | Էլիտա և ընտրովիներ | Էլիտա և ընտրովիներ | I | II |
| I դաս . . . . . . . | I | I | I | II | III |
| II դաս . . . . . . . | I | I | II | II | III |
| III դաս . . . . . . . | II | II | II | III | III |

51. Բոնիտիրովկայի ժամանակ մատղաշի կոնստիտուցիայի, էքստերյերի և ցեղի արտահայտության գնահատությունը կատարվում է հինգ բալային սիստեմով, առանց էքստերյերի յուրաքանչյուր հոդվածի մանրամասն նկարագրության:

52. Մատղաշի դասային գնահատումն ըստ ծագման և կենդանի քաշի իջեցվում է մեկ դասով, կոնստիտուցիայի, էքստերյերի և տիպիկ լինելու համար 3 բալից ցածր գնահատում տալու դեպքում և բարձրացվում է մեկ դասով II և III դասի մատղաշի համար՝ էքստերյերը 4 և 5 թվանշանով գնահատելու դեպքում և I դասի մատղաշի համար—5 թվանշանի դեպքում:

## IV. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՈՐՈՇԵԼԸ

53. Սովխոզներում դասերը որոշելուց հետո բոնիտիրովկայի ենթարկված բոլոր անասուններն ըստ նշանակման բաշխվում են 3 խմբի՝

Առաջին խումբը — *Արդյունաբերական սովխոզներում տոհմային կորիզն է և տոհմային սովխոզներում — սելեկցիոն խումբը (առաջատար տոհմային խումբը)՝*

*ա) իր ժառանգական արտադրական հատկություններով հոտի վերարտադրության նպատակով անհրաժեշտ քանակի լավագույն մայրական գլխաքանակը (կովեր և երինջներ),*

*բ) սովխոզի (տոհմ. սովխոզի) արտադրող ցուլեր.*

*գ) երկսեռ մատղաշներ, որոնք թողնվում են տնտեսությունում ռեմոնտի և հոտի վերարտադրության համար:*

Երկրորդ խումբը — արտադրական՝

*ա) մնացած կովերը, որպիսիք թողնվում են տնտեսությունում ռեմոնտի պահանջից ավելի մատղաշներ և կաթնային ու մսային մթերքներ արտադրելու համար.*

*բ) ավելցուկ արտադրող ցուլեր, որոնք նշվում են որպես տոհմայիններ վաճառելու.*

*գ) երկսեռ տոհմային մատղաշներ, որոնք նշանակված են վաճառելու կոլխոզներին և սովխոզներին:*

Երրորդ խումբը — *անասուններ, որոնք նշանակվում են բտման և մսացու հանձնելու համար՝*

*ա) արտադրական նպատակների համար ոչ պիտանի կովեր.*

*բ) զուգավորման համար անպետք արտադրող-ցուլեր և*

*գ) կաթնային և այլ սովխոզներում տոհմային ու արտադրական նպատակների համար անպետք մատղաշներ:*

*54. Կոլխոզներում անասունների բոնիտիրովկայի ժամանակ բոնիտիրովկայի տեղեկագրերում անպայման նշվում են՝*

*ա) մեծահասակ կենդանիներ, որոնցից հանձնարարվում է կոլխոզին մատղաշներ աճեցնել իր հոտի ռեմոնտի և վերարտադրության համար.*

*բ) տնտեսությունում որպես տոհմային թողնվող մատղաշներ և*

*գ) մատղաշներ, նախորոշված վաճառքի համար որպես տոհմայիններ:*

## V. ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*55. Բոնիտիրովկան անց է կացվում ամեն տարի աշնան շրջանում:*

*56. Սովխոզներում բոնիտիրովկա անցկացնելու ընդհանուր ղեկավարությունն իրականացվում է այն համապատասխան ժողկոմատների և կազմակերպությունների կողմից, որոնց իրավասության տակ են գտնվում սովխոզները, և անց են կացվում սովխոզի ուժերով: Կոլխոզներում և կոլխոզնիկների մոտ եղած անասունների բոնիտիրովկան անց են կացնում ՍՍՌՄ Հողժողկոմատի օրգանները՝ հողօրգանների զոոտեխնիկական ուժերի միջոցով:*



*57. Բոնիտիրովկայի պատշաճ կազմակերպման պատասխանատվությունը դրվում է՝ տոհմաբուծարաններում դիրեկտորի և ավագ զոոտեխնիկի վրա, բոնիտիրովկա անցկացնելու գործում հողբաժնի պարտադիր մասնակցությամբ, իսկ պետտոհմաբուծարանի կողմից չսպասարկվող շրջաններում՝ հողբաժնի վարիչի անասնապահության գծով տեղակալի և հողբաժնի ավագ զոոտեխնիկի վրա, սովխոզներում՝ սովխոզի դիրեկտորի և ավագ զոոտեխնիկի վրա:*

*58. Կոլխոզում անասունների բոնիտիրովկայի անմիջական անցկացումը դրվում է հանձնաժողովի վրա, որ կազմված է լինում բոնիտյոր-զոոտեխնիկից, անասնաբուժից կամ անասնաբուժակից, կոլխոզ ֆերմայի վարիչից և ենթաշրջանային զոոտեխնիկից:*

*Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավվում են փորձված կթվորներ, հորթապաններ, անասնապահական բրիգադների առաջավոր տավարապաններ: Անհատական օգտագործման տակ գտնված անասունների բոնիտիրովկայի ժամանակ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից է արվում գյուղսովետի անասնապահական սեկցիայի նախագահը:*

*Սովխոզներում բոնիտիրովկայի անցկացումը գլխավորում է հանձնաժողովը, որ կազմված է լինում սովխոզի դիրեկտորից, ավագ զոոտեխնիկից, սելեկցիոներ-զոոտեխնիկից և սովխոզի ավագ անասնաբուժից, ներգրավելով այդ աշխատանքին կթվորներին, հորթապաններին և անասնապահության առաջավոր տավարապաններին: Սովխոզի յուրաքանչյուր ֆերմայում հանձնաժողովի աշխատանքներին անպայմանորեն մասնակցում են ֆերմայի վարիչը, զոոտեխնիկը և համապատասխան ֆերմայի անասնաբույժ տեխնիկը, ինչպես և բոնիտիրովկայի ենթարկվող նախրի բրիգադիրը:*

*59. Բոնիտիրովկայի ենթարկվող կենդանիների դասերը և ցեղերը ճիշտ որոշելու անձնական պատասխանատվությունը դրվում է բոնիտյոր-զոոտեխնիկների վրա: Բոնիտյոր-զոոտեխ-*

նիկների կազմը հաստատվում է ռեսպուբլիկական ՀԺԿ-ի և երկրամասային (մարզային) հողօրգանների անասնապահական վարչության պետի հատուկ հրամանով, իսկ սովխոզներում՝ վարչության պետի կամ տրեստի դիրեկտորի հրամանով։

60. Բոնիտիրովկայի ժամանակ կենդանիներին ավելի ճիշտ գնահատում տալու նպատակով յուրաքանչյուր տնտեսություն (սովխոզ, կոլխոզ) ամբողջ տարվա ընթացքում պարտավոր է անցկացնել ներքոհիշյալ միջոցառումները զոոտեխնիկական հաշվառման գծով՝

ա) հաշվի առնել յուրաքանչյուր կովի ամենօրյա կիթը.

բ) ամեն ամիս որոշել կաթի ճարպի տոկոսը.

գ) ամեն ամիս կշռել տոհմային մատղաշները.

դ) սիստեմատիկորեն տանել կովերի զուգավորման, ծնի և ցամաքելու գրանցումները.

ե) պարբերաբար, սահմանված ժամկետին կշռել հասակավոր անասունները և մատղաշները.

զ) հորթը ծնվելուց հետո մեկ օրվա ընթացքում նորածնի մասին տվյալները գրանցել մատղաշների աճեցման գրքում։

է) հաշվի առնել ցուլերին և I ու բարձր դասի կովերին անհատորեն կերցրած կերերի քանակը, իսկ մնացած անասունների համար ըստ խմբերի։

ը) մանրակրկիտ գրանցումներ կատարել ծագման և ժառանգականության վերաբերյալ.

թ) բոլոր սովխոզներում, կոլխոզային տոհմային ֆերմաներում և տոհմաբուծարանի սպասարկած շրջանի բոլոր կոլխոզային ֆերմաներում ունենալ տոհմային գիրք՝ ՍՍՌՄ ՀԺԿ-ի և կենտլիճվարչության կողմից հաստատված ձևերով։

ժ) ճշտապահորեն և բարեխղճորեն կատարել բոլոր տոհմային ու արտադրական գրանցումները և նյութերը մեծ խնամքով պահպանել դրամական փաստաթղթերին հավասար։

61. Բոնիտիրովկայից առաջ, յուրաքանչյուր տնտեսություն (սովխոզ, կոլխոզ) անց է կացնում՝

ա) լակտացիայի ընթացքի կաթի հաշվում, սահմանում է օրվա ամենաբարձր կիթը և նախապատրաստում է բոլոր նյութերը, որոնք բնութագրում են կենդանուն ըստ նրա տոհմային գործունեության, առողջական վիճակի և այլն.

բ) բոլոր խոշոր եղջյուրավոր անասունների անասնաբուժական մշակում՝ անպայմանորեն ավարտելով այն մինչև բոնիտիրովկայի սկիզբը.



գ) կենդանիների համարների ստուգում, վերականգնելով ոչ պարզ կամ կորցրած համարները.

դ) ոչ շուտ քան բոնիտիրովկան սկսելուց 2 շաբաթ առաջ յուրաքանչյուր անասունի կենդանի քաշի որոշելը (առավոտյան մինչև կերի բաշխելը և արոտ քշելը)։

62. Բոնիտիրովկան սկսելուց առաջ բոնիտյոր-զոոտեխնիկը հողբաժնի հետ միասին (կոլխոզների համար) և սովխոզի դիրեկտորի հետ միասին (սովխոզի համար) ըստ առանձին ֆերմաների և նախրի կազմում է բոնիտիրովկա անցկացնելու օրացուցային պլան, հաշվի առնելով անասնաբուժա-սանիտարական պահանջները և ձեռք առնելով համապատասխան սանպրոֆիլակտիկ միջոցներ։

63. Տնտեսություններում անասունների բոնիտիրովկան անց է կացվում հանձնաժողովի միջոցով հետևյալ կարգով՝

ա) ֆերմաներում և բրիգադաներում անց են կացվում արտադրական խորհրդակցություններ, ուր բացատրվում են բոնիտիրովկայի խնդիրները, կատարման կարգը, բրիգադիրների, կթվորների, հորթապահների և տավարապահների մասնակցության անհրաժեշտությունն անասունների բոնիտիրովկայի՝ աշխատանքին.

բ) ստուգվում է կենդանիների կերակրման, խնամքի և պահպանման կազմակերպումը.

գ) ստուգվում են նախրի սկզբնական արտադրական հաշվառման բոլոր տվյալները (կիթի, զուգավորման, ծնի, անասունի կշռման գրանցումները, առողջական վիճակի մասին տվյալները և այլն).

դ) զոոտեխնիկական հաշվառման տվյալների հիման վրա լրացվում են ցուլերի բոնիտիրովկայի քարտերը, կովերի, երինջների, էգ հորթերի և մատղաշների համար բոնիտիրովկայի տեղեկագիրն ու քարտերը, բացառությամբ էքստերյերի և կոնստիտուցիայի վերաբերյալ տվյալների, գիրության վիճակի, առողջության և դասերի, որոնք լրացվում են անմիջապես կենդանիներին նայելով.

ե) այնուհետև կատարվում է կենդանիների անմիջական զոոտեխնիկական զննում։ Նայելու ժամանակ ստուգվում է համարների ճշտությունը, անունը, գույնը և նշանները, կենդանիների տարիքը, նրանց ցեղայնությունը, որոշվում է գիրությունը, նշվում է առողջական վիճակը, գնահատվում է կենդա-

նու էքստերյերը և կոնստիտուցիան։ Կենդանիներին անմիջապես նայելու բոլոր տվյալները գրանցվում են բոնիտիրովկայի քարտի և տեղեկագրի համապատասխան սյունակներում։

Ցեղայնության, մթերատվության, կոնստիտուցիայի, էքստերյերի, կենդանի քաշի և առողջական վիճակի գնահատման հիման վրա սահմանվում է դասը և այնուհետև յուրաքանչյուր կենդանու նշանակումը.

Ծանոթություն.—Եթե կենդանիները նախորդ տարում ըստ էքստերյերի ստացել են վերջնական գնահատական և եթե էքստերյերի գնահատականը 100 բալային շկալայով ընթացիկ տարում չի անցկացվել, էքստերյերի վերաբերյալ գրաֆաներում դրվում է անցյալ տարվա բոնիտիրովկայով ստացված էքստերյերի ցուցանիշը։ Ըստ որում այն կենդանիների նկատմամբ, որոնց մոտ կիթի և կենդանի քաշի փոփոխություն չի կատարվել, որպիսին հիմք է տալիս կենդանու դասային վերագնահատում կատարելու, դարձյալ դրվում է այդ նույն դասը, որը յուրացվել էր նրա կողմից անցյալ տարվա բոնիտիրովկայի ժամանակ։

64. Բոնիտիրովկան կատարվում է սկզբում առողջ անասուն ունեցող ֆերմաներում և վերջին հերթին բոնիտիրովկայի են ենթարկվում տուբերկուլյոզով, բրուցելյոզով և այլ ինֆեկցիոն հիվանդություններով հիվանդ անասունները, ինչպես և ինֆեկցիոն հիվանդություններով հիվանդ հորթեր ունեցող նախիրը։ Ինֆեկցիոն հիվանդությունները մեկ տեղից մյուսը փոխադրելուց խուսափելու համար պետք է ձեռք առնվեն պրոֆիլակտիկ ամենախիստ միջոցներ։

65. Անասուններին նայելը վերջացնելուց հետո յուրաքանչյուր տնտեսությունում բոնիտիրովկայի հանձնաժողովը կազմում է բոնիտիրովկայի հաշվետվություն։ Բոնիտիրովկայի արդյունքները քննության են առնվում տնտեսության (ֆերմայի) արտադրական խորհրդակցությունում։

## VI. Բոնիտիրովկայի մասին հաշվետվությունը

66. Ցուլերի բոնիտիրովկայի անհատական քարտերը (ձև № 1 և 1ա), կովերի բոնիտիրովկայի տեղեկագրերը (ձև № 2 և 3) և երինջների, էգ հորթերի ու ցուլիկների բոնիտիրովկայի տեղեկագրերը (ձև № 4) լրացվում են՝

ա) կոլխոզներում երկու օրինակից, որոնցից պետտոհմաբուծարանի շրջանների կոլխոզներում մեկն ուղարկվում է տոհմաբուծարանին և երկրորդը շրջհողբաժնին. իսկ այն շրջաններում,



որոնք չեն սպասարկվում պետտոհմաբուծարանի կողմից՝ մեկն ուղարկվում է շրջհողբաժնին, իսկ մյուսը մնում է կոլխոզում.

բ) յուրաքանչյուր սովխոզում, կոլխոզային տոհմային ֆերմաներում և տոհմաբուծարանի սպասարկած շրջանի բոլոր կոլխոզային ֆերմաներում բոնիտիրովկայի տվյալներն անպայման մտցնում են տոհմային (գործարանային) գրքերը։ Մատղաշների բոնիտիրովկայի տեղեկագրերի պատճենները թողնվում են բոլոր կոլխոզներում.

գ) սովխոզներում կազմվում են՝ 1) կովերի կոնստիտուցիայի և էքստերյերի 100 բալային շկալայով (ձև № 3) գնահատման տեղեկագիր մեկ օրինակից, որպիսին մնում է սովխոզում. 2) կովերի և մատղաշների բոնիտիրովկայի տեղեկագրեր (ձև № 2 և 4) արդյունաբերական սովխոզներում մեկ օրինակից, տոհմային սովխոզում երեք օրինակից, որոնցից մեկը մնում է տոհմային սովխոզում, մյուսը ուղարկվում է համապատասխան վարչությանը, երրորդը ժողկոմատի վարչությանը. 3) արտադրող-ցուլերի բոնիտիրովկայի քարտերը (ձև № 1 և 1ա) երեքական օրինակից, որոնցից մեկը մնում է սովխոզում, մյուսն ուղարկվում է համապատասխան տրեստին և երրորդը ժողկոմատի համապատասխան վարչությանը.

դ) բոլոր սովխոզներում (տոհմ. տնտեսությունում) բացի այդ կազմվում և տրեստ են ուղարկվում՝ 1) բոնիտիրովկայի մասին հաշվետվությունը, ժողկոմատի կողմից սահմանված ձևով երեք օրինակից, որոնցից մեկ օրինակը հաստատվելուց հետո վերադարձվում է սովխոզին, երկրորդն ուղարկվում է ժողկոմատի համապատասխան վարչություն, երրորդը մնում է տրեստում.

67. Սովխոզը շրջհողբաժնին ներկայացնում է նախրի ցեղական կազմի մասին հաշվետվություն-հաշվետվության ձևով և բոլոր կենդանիների անհատական ցուցակագրությունը №№ 3 և 4 ձևերով, որոնք բավարարում են շրջանային և պետական տոհմային գրքեր գրանցելու պահանջներին։

68. Բոնիտիրովկայի տեղեկագրերի ամփոփումները (ձև № 5 և 6) կազմվում են՝

ա) տոհմաբուծարանների կողմից՝ երեք օրինակից, որոնցից մեկը մնում է տոհմաբուծարանում, երկրորդն ուղարկվում է ռեսպուբլիկական ՀԺԿ-ին, երկրամասային (մարզային) հողբաժնին և երրորդն ուղարկվում է ՍՍՌՄ ՀԺԿ-ին.

բ) տոհմաբուծարանների կողմից չսպասարկվող շրջանների բոլոր հողբաժինները՝ երկուական օրինակից, որոնցից մեկը մնում է հողբաժնում և երկրորդն ուղարկվում է ռեսպուբլիկական ՀԺԿ.-ին, երկրամասային (մարզային) հողօրգաններին։

69. Ռեսպուբլիկական հողժողկոմատները, երկրամասային (մարզ) հողօրգանները ՍՍՌՄ ՀԺԿ-ին բոնիտիրովկայի տեղեկագրերի ամփոփումները (ձև № 5 և 6) ներկայացնում են միմիայն ըստ այն շրջանների, որոնք չեն սպասարկվում տոհմաբուծարանների կողմից։

## VII. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

70. Շրջ. հողբաժինները, տոհմաբուծարանները, իսկ սովխոզներում անմիջապես բոնիտիրովկա անցկացնող հանձնաժողովները բոնիտիրովկայի նյութերի հիման վրա մշակում են՝

ա) առաջիկա տարվա զուգավորման պլանը՝ ըստ առանձին արտադրողների, ցույց տալով նրանց ամրացվող մայրերի քանակը, դասերը, գեներացիաները և զուգավորման եղանակները, օգտագործելով լավագույն զտարյուն և մետիս ցուլերն արհեստական սերմնավորման կայաններում։

Մայրերի նկատմամբ ցուլերի ընտրության պլանը պետք է ապահովի՝ ցեղայնության լավացումը և հոտի մթերատվության բարձրացումը (ազնվարյունության չափի բարձրացում, կթի բարձրացում, կաթի յուղայնություն, կենդանի քաշի, սերնդի վաղահասություն, ամուր և առողջ սերնդի ստեղծում, նրա էքստերյերի և կոնստիտուցիայի լավացում), մայրերին առողջ, մարմնի բարեկազմությամբ և կոնստիտուցիայով լավագույն ցուլերով ծածկելու միջոցով, որոնք ունեն մայրերից ավելի բարձր բալային գնահատական և որակի նկատմամբ ստուգված սերմ։ Մայրերին համապատասխան արտադրողների ընտրության ժամանակ պետք է ապահովել բուծումը սելեկցիոն-տոհմային աշխատանքների պլանին համապատասխան գծով, թույլ չտալով անսիստեմ, մոտ ազգակցական բուծում։

բ) Նախիրը տոհմային անասուններով կոմպլեկտավորելու պլանը, ցածրորակ արտադրողներին ավելի բարձրորակներով փոխարինելու կարգը և ժամկետը։

գ) Տոհմային անասունների գնման և վաճառքի պլանը և տոհմային մատղաշների աճեցման միջոցառումները։



դ) Կենդանիների առանձնացումը շրջտոհմային և պետտոհմային գրքեր գրանցելու համար և նրանց մասին հողօրգաններին տվյալներ ներկայացնելը։

ե) Ցուցմունքներ զոոտեխնիկական հաշվառում տանելու մասին։

զ) Անասնաբուժական կոնկրետ միջոցառումներ առաջիկա տարում հոտն էպիզոոտիկ հիվանդություններից պաշտպանելու, ինչպես և եղած հիվանդությունների լիկվիդացիայի մասին։

71. Բոնիտիրովկա անցկացնող հանձնաժողովը ցուցմունքներ է տալիս շտկելու նկատված թերությունները՝ անասունները շենքով, բազմատեսակ և լիարժեք կերերով, ջրով և կանոնավոր խնամքով, կերակրմամբ և պահպանմամբ ապահովելու վերաբերյալ։

## VIII. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՇՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ ՏԱԼԸ

72. Բոլոր սովխոզներում և կոլխոզային ֆերմաներում կենդանիների նշումը և նրանց անուն տալը հանդիսանում է պարտադիր։

73. Կենդանուն դույքային համար և անուն տրվում է նրա ծնվելու առաջին օրը։ Բոնիտիրովկայի ժամանակ կենդանիների դույքային համարը փոփոխել չի թույլատրվում, բայց պարտադիր կարգով համարակալվում են համար չունեցող կամ այս կամ այն պատճառով իրենց դույքային համարը կորցրած կենդանիները։

74. Նորածին հորթերին դույքային համար և անուն տալիս է սովխոզում ֆերմայի զոոտեխնիկը, կոլխոզներում՝ ԿԱՖ-ի վարիչը ըստ անունների ցուցակի և հերթական համարների, որոնք նախօրոք հաստատվում են սովխոզներում դիրեկտորի և կոլխոզներում—կոլխոզի նախագահի կողմից։

Անունների ցուցակը հաստատելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

ա) յուրաքանչյուր տնտեսությունում (սովխոզում, կոլխոզում) չպետք է լինի երկու միանման անուն.

բ) կենդանիների անունները պետք է լինեն հասարակ, հասկանալի, ըստ հնարավորության կարճ և գեղեցիկ, բայց ոչ մի դեպքում չպետք է համընկնեն քաղաքական-հասարակական տերմինների հետ, մարդկանց անվան, ազգությունների անունների հետ և կամ չպետք է լինեն կենդանիներին արատավորող անուններ։

75. Նորածին հորթերի համարակալումը, չհամարակալած ավելի բարձր հասակի մատղաշների և մեծահասակ անասունների համարակալումը յուրաքանչյուր տնտեսությունում սկսվում է առաջին համարից և տարվում է աճող կարգով մինչև 9999 համարը, որից հետո սկսվում է նորից առաջին համարից։ Նույն համարների կրկնողությունը նույն տնտեսությունում երկու կամ մի քանի կենդանիների մոտ չի թույլատրվում։ Այդ նպատակով այս կամ այն կենդանուն տրված համարը հանվում է հերթական համարների թվից։ Կենդանուն առաջուց տրված համարը փոփոխման ենթակա չէ։

76. Այն սովխոզներում, որտեղ կա մի քանի ֆերմաներ, որպեսզի գույքային համարները չկրկնվեն, յուրաքանչյուր ֆերմային յուրացվում է որոշ քանակի հերթական համարներ։ Օրինակ՝ № 1 ֆերման մատղաշներին համարակալում է 1-ից մինչև 1999 համարով, № 2 ֆերման՝ 2000-ից մինչև 3999 և այլն։

77. Մատղաշների գույքային համարը դրվում է դաճման (տատուիրովկայի) միջոցով, աջ ականջին։ Միաժամանակ ավելի հուսալի լինելու համար ականջին ամրացվում է նույն համարի ժետոն կամ կնոպկա։

78. Երբ մատղաշն անցնում է մեծահասակ անասունների խումբը սովխոզներում և կոլխոզներում նրա աջ ականջին խփած դաճի համարը դամղվում է աջ եղջյուրին։

79. ՍՍՌՄ Հողժողկոմատի թույլատվությամբ մեծ քանակությամբ մանր կոլխոզային ֆերմաներ ունեցող ցեղական անասնապահության շրջաններում հողբաժինները և տոհմաբուծարանները կարող են սահմանել շրջանի ամբողջ մեծահասակ անասունների համար միասնական հերթական համարներ։ Այս դեպքում մատղաշին տրվում է մոր համարը՝ տատուիրովկայով աջ ականջին, մեծահասակների շարքն անցնելիս նրան տրվում է շրջանի համար մեծահասակ կենդանիների հերթական համարը, այդպիսին դամղելով նրա աջ եղջյուրի վրա։

80. Կենդանիներին պետտոհմգրքում գրանցելիս տոհմային գրքի համարը դամղվում է ձախ եղջյուրի վրա (անեղջյուր կենդանու ձախ ականջին հագցվում է ժետոն կամ կնոպկա)։





Շկալա №1

Կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի խոշոր եղջյուրավոր անասունների պունկտիրային գնահատման

| Էքստերյերի, կոնստիտուցիայի և տիպիկայնության հոդվածները | Հոդվածների նկարագրությունը | Բալային գնահատումը — կովեր: Հնարավոր մաքսիմալ միավ | Գործակից | Ընդհանուր միավ | Բալային գնահատումը — ցուլեր: Հնարավոր մաքսիմալ միավ | Գործակից | Ընդհանուր միավ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Էքստերյերի հոդվածները | | | | | | | |
| 1. Գլուխը, վիզը | Գլուխը, վիզը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| 2. Կուրծքը | ա) կրծքի լայնությունը և կողերի կլորությունը | 5 | 1 | 5 | 5 | 2 | 10 |
| | բ) կրծքի խորությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| 3. Մեջքը, մեջքը, գոտկատեղը | Լայնությունը, երկարությ. և հավասարությունը | 5 | 3 | 15 | 5 | 3 | 15 |
| 4. Գավակը | ա) լայնությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| | բ) երկարությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| | գ) տանիքաձևության բացակայությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| | դ) հետույքի կախության բացակայությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| 5. Կուրծքը | Կրծքի ձևը, դասավորությունը և պտուկների ձևը | 5 | 3 | 15 | — | — | — |
| 6. Ետին և առաջին ոտքերը | Ոտքերի դրվածքը, կարգինաձևության և թրաձևության բացակայությունը | 5 | 1 | 5 | 5 | 2 | 10 |
| 7. Կոնստիտուցիան | ա) Մարմնակազմի համաչափությունն ամբողջությամբ և մթերատվության տնտեսական ուղղության համապատասխանելը | 5 | 2 | 10 | 5 | 3 | 15 |
| | բ) Ոսկրակազմի ամրությունը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| | գ) Մկանունքների զարգացումը | 5 | 1 | 5 | 5 | 1 | 5 |
| 8. Տիպիքայնությունը | Ցեղի տիպի արտահայտված լինելը | 5 | 2 | 10 | 5 | 2 | 10 |
| | Գումարը՝ | — | — | 100 | — | — | 100 |

## ՕԺԱՆԴԱԿ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՇՈՐ ԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԷՔՍՏԵՐՅԵՐԻ ՅԵՎ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

(կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի համար)

| Էքստերյերի, կոնստիտուցիայի և տիպիքայնության հոդվածները | «5» բալով գնահատելու համար պահանջվում է | Բալի իջեցում կատարվում է հետևյալ թերությունների համար |
|---|---|---|
| I Էքստերյերի հոդվածները | | |
| 1. Գլուխը և վիզը | Գլուխը թեթև, տիպիք ցեղի համար | Ծանր, գերազարգացած, ցուլագլուխ (կովի համար), կովի (ցուլի համար) |
| | Վիզը՝ երկար, ուղիղ, բարակ ծալքավոր մաշկով | Կարճ, կոպիտ. |
| 2. Կրծքի լայնությունը և կողերի կլորությունը | Կուրծքը՝ լայն, թիակների ետևն առանց սղմվածության | Կուրծքը՝ նեղ, թիակների ետևը սղմված |
| | Կողերը՝ երկար կլոր շեղաձև | Կողերը տափակ. |
| 3. Կրծքի խորությունը | Խորը | Ոչ խորը |
| 4. Մնդավը, մեջքը և գոտկատեղը | Մնդավը՝ ուղիղ, բարձր, լայն կաթնա-մսատու ցեղի համար, ավելի նեղ կաթնատու ցեղի համար | Ցածր, սուր |
| | Մեջքը՝ լայն, երկար, ուղիղ | Նեղ, կարճ, կախ ընկած, սապատավոր |
| | Գոտկատեղը՝ լայն, ուղիղ, տափակ | Նեղ, կախ ընկած, տանիքաձև |
| 5. Գավակը | ա) լայն | Սուր ետնամաս (шилозадость) |
| | բ) երկար | Կարճ |
| | գ) ուղիղ | Կախ ընկած |
| | դ) տանիքաձևության բացակայությունը | Տանիքաձև |
| 6. Կուրծը | Մեծ, զարգացած գեղձերով և համաչափ զարգացած մասերով, երկար և լայն դրվածքի պտուկներով | Փոքր կամ կախ ընկած, ճարպային, անհամաչափ զարգացած մասերով. կարճ, իրար մոտ դասավորված, աննորմալ զարգացած պտուկներով |
| 7. Առաջին և ետին ոտքերը | Առջևի ոտքերի դրվածքն ուղիղ | Ենթադաստակները մոտեցված |
| | Հետևի ոտքերի դրվածքն ուղիղ | Թրաձևություն, կարգինաձև, փղի դրվածքով |
| II. Կոնստիտուցիան | ա) մարմնակազմի համաչափությունն ամբողջությամբ և մթերատվության տնտեսական ուղղության համապատասխանելը | Մարմնակազմի անհամաչափ դասավորում և մթերատվության տնտեսական ուղղության անհամապատասխանելը |
| | բ) ամուր ոսկրակազմ, բայց ոչ ծանր և ոչ գերազարգացած | Ծանր, փխրուն գերզարգացած |
| | գ) մկանունքներն ամբողջ մարմնով լավ զարգացած | Թույլ զարգացած |
| III. Տիպիքայնությունը | Ըստ մարմնակազմի և գույնի անասունի տիպիքայնությունը գերազանց արտահայտված (ցեղի համար) | Տիպիքայնությունը թույլ արտահայտված |



Հավելված Iա

ՕԺԱՆԴԱԿ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՇՈՐ ԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԷՔՍՏԵՐՅԵՐԻ ՅԵՎ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

(կաթնատու և կաթնա-մսատու ցեղերի համար)

Բոնիտիրովկայի ժամանակ խոշոր եղջյուրավոր անասունների մատղաշների դասն ըստ կենդանի քաշի որոշելու համար նվազագույն պահանջները

| Ցեղը | Դասը | Կենդանի քաշը հասակում՝ 6 ամիս Ցուլիկ-ներ | 6 ամիս Էգեր | 9 ամիս Ցուլիկ-ներ | 9 ամիս Էգեր | 12 ամիս Ցուլիկ-ներ | 12 ամիս Էգեր | 18 ամիս Ցուլիկ-ներ | 18 ամիս Էգեր | 24 ամիս Ցուլիկ-ներ | 24 ամիս Էգեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շվից | Ռեկորդ-էլիտա | 180 | 170 | 240 | 230 | 300 | 285 | 410 | 365 | 510 | 420 |
| | 1-ին դաս | 165 | 155 | 220 | 210 | 270 | 260 | 370 | 330 | 460 | 380 |
| | 2-րդ դաս | 150 | 140 | 200 | 190 | 240 | 235 | 330 | 295 | 410 | 340 |
| Սիմմենտալ | Ռեկորդ-էլիտա | 200 | 190 | 275 | 255 | 330 | 310 | 440 | 350 | 540 | 440 |
| | 1-ին դաս | 180 | 170 | 250 | 230 | 300 | 280 | 400 | 350 | 490 | 460 |
| | 2-րդ դաս | 160 | 150 | 225 | 205 | 270 | 250 | 360 | 315 | 440 | 360 |
| Կարմիր-նեմկա | Ռեկորդ-էլիտա | 165 | 155 | 220 | 210 | 275 | 255 | 375 | 340 | 460 | 390 |
| | 1-ին դաս | 150 | 140 | 200 | 190 | 250 | 230 | 40 | 310 | 420 | 350 |
| | 2-րդ դաս | 135 | 125 | 180 | 170 | 225 | 205 | 305 | 280 | 380 | 310 |

Ծանոթություն 1. 3-րդ դասը 2-րդ դասից ցածր է։

2. Տախտակում ցույց տված (միջանկյալ) կենդանի քաշի պահանջն ըստ մատղաշների հասակի, ցեղի և դասի հանվում է այս նույն տախտակով հասակային խմբերի միջև յեղած օրվա միջին քաշի չափով։

Օրինակ՝ կարմիր-նեմկա ցեղի ցուլիկը 14 ամսական 5 օրական հասակում կշռում է 280 կգր. որոշվում է 1-ին դաս ըստ կենդանի քաշի (12 ամսական հասակում 250 կգր. + 15 × 2 կգր.—ամսվա համար քաշի աճը բազմապատկած 2-ով)։

Նվազագույն պահանջներն ըստ կթի, ճարպի տոկոսի և կովերի ու ցուլերի կենդանի քաշի, բոնիտիրովկայի 1-ին դասը գցելու և պետական տոհմային գրքում գրելու համար

